ՄԱՐԻԱՄ ՄՆԴՈՅԱՆ
ՀՀ արդարադատության նախարարության
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի
վարչության առաջատար մասնագետ

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 2004թ. 1540 որոշման մեջ սահմանել է, որ բոլոր պետությունները պետք է խուսափեն տրամադրել, փոխադրել, կիրառել միջուկային, քիմիական կամ կենսաբանական զենքեր և իրախուսում է բոլոր պետություններին միջոցներ ձեռնարկել այն օրենքով ամրագրելու համար: 2006թ. 1540 Հանձնաժողովի մանդատը երկարացվեց 1673 (2006) որոշմամբ ևս երկու տարով՝ նպատակ ունենալով 1540 որոշումը ամբողջովին իմպլեմենտացնելու փոխօգնության, համագործակցության, ուսումնասիրությունների միջոցով: 2008թ. 1810 որոշմամբ Հանձնաժողովի մանդատը ևս երեք տարով երկարացվեց մինչև 2011թ. ապրիլի 25-ը: Այսպիսի միջազգային համագործակցության նպատակն է ստեղծել նորմերի մի այնպիսի համակարգ, որոնց միջոցով կարգելվի միջուկային զենք տիրապետողներին հանձնել, ընդունել, ստեղծել, փորձարկել, կիրառել զանգվածային ոչնչացման զենքի այս տեսակը, եթե դա ուղղված է մարդկանց, կենդանական աշխարհը և բնությունը ոչնչացնելուն, բայց միջուկային զենքի արգելումը բոլորովին չպետք է խոչընդոտի խաղաղ նպատակներով միջուկային գիտության, միջուկային տեխնոլոգիաների կիրառմանը:

Միջուկային զենքի ոլորտում գոյություն ունեցող մեխանիզմները սահմանափակվում են միջուկային օբյեկտների ու նյութերի և դրանց գործադրման հսկողությամբ, ինչպես նաև՝ այդ զենքերի միջազգային և ազգային արտահանման հսկողությամբ, և ոչ մի նորմ դեռևս գոյություն չունի միջուկային զենքը չկիրառելու վերաբերյալ: Այս հարցը չի կարելի անտեսված համարել, իհարկե այն փաստը, որ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 1995թ. խորհրդի կարգով դիմեց Միջազգային դատարան ատոմային խնդրի շուրջ, խոսում է այն մասին, որ միջազգային կազմակերպությունները առանձին պետություններից զատ զբաղվում են այս հարցով: Միջազգային դատարանը որոշեց, որ ոչ ընդհանուր միջազգային իրավունքը, ոչ միջազգային պայմանագրային իրավունքը չեն պարունակում հստակ լուծում, որը վերաբերում է ատոմային զենքի օգտագործմանը կամ սպառնում է դրա օգտագործմանը: Միջազգային դատարանի հաջորդ քայլը եղավ որոշել, որ արգելվում է ատոմային զենքի օգտագործումը կամ դրա օգտագործման սպառնալիքը, և ատոմային զենքի օգտագործումը կամ դրա օգտագործման սպառնալիքը պետք է համապատասխանեն ռազմական բախումների իրավունքի պահանջներին, մասնավորապես՝ միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքներին, ու նորմերին և պահանջներին, որոնք վերաբերում են ատոմային զենքի օգտագործմանը[1]:

Միջուկային զենքը մեր երկիր մոլորակում գոյություն ունեցող ամենավտանգավոր զենքն է: Այն կարող է միանգամից կործանել քաղաքներ, սպանել միլիոնավոր մարդկանց և ոչնչացնել բնությունն ու շրջակա միջավայրը, բացի այդ, այն իր կործանիչ հետևանքները բողնում է տարիներ շարունակ: Ցավալին այն է, որ միջուկային զենքը շարունակաբար փոր-

ձարկվում է: Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ միջուկային զենքի ավելի քան 2000 փորձարկում է եղել մինչ օրս:

Միջուկային զենքի ստեղծման հենց սկզբից ՄԱԿ-ը միջոցներ է ձեռնարկել զենքի այս տեսակը ոչնչացնելու համար: Հենց այս նպատակով է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի որոշմամբ 1946թ. ստեղծվել հանձնաժողով, որը նպատակ ուներ, համագործակցելով միջուկային զենք տիրապետող երկրների հետ, կանխելու միջուկային զենքի ավելի լայն կերպով տարածումը: Խաղաղ նպատակներով միջուկային զենք տիրապետող երկիրը իր հերթին պարտավորվում է տեղեկատվություն փոխանակել ատոմային էներգիայի հետագա զարգացման մասին:

Միջուկային զենքի ստեղծումից հետո բազմաթիվ բազմակողմանի պայմանագրեր են կնքվել, որոնց նպատակը եղել է կանխել միջուկային զենքի կիրառումը և փորձարկումը: Այս պայմանագրերի թվին դասվում են Միջուկային զենք չտարածելու մասին, Միջուկային զենքի փորձարկումը մթնոլորտում, ջրերում և տիեզերքում արգելելու մասին, 1996թ. կնքված և դեռևս ուժի մեջ չմտած Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման մասին պայմանագիրը:

Մի շարք երկկողմանի պայմանագրեր ևս կնքվել են, որոնցով փորձում են կարգավորել միջուկային խնդիրները:

1963թ. Միջուկային զենքի փորձարկման արգելման մասին պայմանագրով կարծես թե ընդհանուր լուծում է տրված հարցին.

Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է արգելել, կանխել, չիրականացնել միջուկային զենքի ցանկացած փորձնական պայթյուններ ցանկացած վայրում, որը գտնվում է նրա իրավական կարգավորման կամ հսկողության ներքո.

ա. մթնոլորտում, դրա սահմաններից դուրս, ներառյալ՝ տիեզերական տարածությունը, ջրերի հատակին, ներառյալ՝ տարածքային ջրերը և բաց ծովը,

բ. ցանկացած այլ միջավայրում, եթե այդ պայթյունը առաջացնում է ռադիոակտիվ ալիքներ պետությունների տարածքային սահմաններից դուրս, որի իրավական կարգավորման կամ հսկողության տակ կատարվում է պայթյունը: Հետագայում պետությունները նույնպես պետք է խուսափեն ինչ-որ ձևով ընդարձակելու կամ մասնակցություն ցույց տալու ցանկացած միջուկային փորձարկումներ անելուց[2]:

Սրանով սահմանվում է, որ արգելվում է փորձարկել միջուկային զենք տիեզերքում ու ջրերի հատակին՝ ամրագրելով այն հիմքը, որի համար էլ կազմվել էր պայմանագիրը, օգտագործել միջուկային զինամթերքը խաղաղ նպատակներով: Պայմանագրում չկա որևէ դրույթ այն մասին, թե ինչպես է նախատեսվում իրականացնել պայմանագիրը կնքող պետությունների առջև դրված նպատակը:

1968թ. Ժնևի հուլիսի 1-ի միջուկային զենքի չտարածման պայմանագրով կողմերը պարտավորվում են չտարածել միջուկային զենք:

Բոլոր այն պետությունները, որոնք տիրապետում են միջուկային զենքի, պարտավորվում են որևէ մեկին ոչ ուղիղ, ոչ էլ անուղղակի ձևով չհանձնել միջուկային զենք կամ այլ միջուկային պայթող սարք կամ հսկողությունը նման զենքի կամ սարքի նկատմամբ: Հավասարապես և որևէ ձևով չօգնել, չընդարձակել և չիրահրել որևէ պետության, որը չի տիրապետում միջուկային զենքի, ինչ-որ ձևով արտադրել կամ ձեռք բերել միջուկային զենք կամ այլ միջուկային պայթուցիկ սարքեր[3]:

Բոլոր այն պետությունները, որոնք չեն տիրապետում միջուկային զենքի, պարտավոր են պահպանել միջազգային նորմերը կամ դրույթները, որոնք սահմանվում են Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) կողմից: Պետությունները միջուկային զենքը խաղաղ նպատակներով կիրառելուց բացի չպետք է այն այլ նպատակներով կիրառեն: Նրանք պետք է երաշխավորեն դա, անկախ նրանից՝ սարքը կիրառվում է որպես միջուկային զենք, թե՞ դրա կիրառման համար

նախատեսված հարմարանք է, արտադրվո՞ւմ է, թե՞ մշակվում է: Ինչ սահմանափակում էլ որ դնում է միջազգային իրավունքը, այն չպետք է խոչընդոտի որևէ պետության տնտեսական, տեխնոլոգիական զարգացմանը, եթե այն իրականացվում է խաղաղ նպատակներով: Այն պետություններն, որոնք չեն տիրապետում միջուկային զենքի, պարտավորվում են կնքել պայմանագիր ԱԷՄԳ-ի հետ և հետևել նրա սահմանած նորմերին:

1968թ. պայմանագրում արդեն կա նորմ, ըստ որի՝ պետությունները պարտավորվում են աջակցել միմյանց միջուկային զենքի կիրառման մասին անհրաժեշտ սարքավորումների, նյութերի, գիտական և տեխնիկական տեղեկության փոխանակության միջոցով միայն խաղաղ նպատակներով: Յուրաքանչյուր պետություն ապագայում պարտավորվում է բանակցել միջուկային զինամարտության վերացման արդյունավետ պայմանների վերաբերյալ:

1971թ. պայմանագիրը արգելում է միջուկային զենք տեղադրել ծովերի և օվկիանոսների հատակին ու դրանց ընդերքում.

Միջազգային իրավունքով արգելվում է տեղակայել, տեղադրել ծովերի և օվկիանոսների հատակին և դրանց ընդերքում ծովային գոտու արտաքին սահմաններից դուրս ցանկացած տեսակի միջուկային զենք, ինչպես նաև՝ զինամբեր կամ այլ հարմարանք՝ հատուկ նախատեսված նման տիպի զենքի պահպանման, փորձարկման կամ կիրառման համար[4]:

Վերջին տասնամյակների ընթացքում ստեղծվել են և գործում են զանազան հսկողության եղանակներ, որոնք կիրառվում են տարբեր՝ միջազգային մարդասիրական, ծովային և այլ ոլորտներում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջազգային հսկողության հիմքում, որը հիմնված է համագործակցության վրա, պետք է ընկած լինի միջազգային պայմանագիրը: Հսկողությունն իրականացվում է միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին համապատասխան: Հսկողությունն իրականացվում է պետությունների պարտականությունների կատարման նկատմամբ:

Որպեսզի ծովերի և օվկիանոսների հատակին միջուկային զենքի տեղադրման արգելքի նպատակը արդյունավետ լինի, պետությունները այլ երկրներին հետևելու հսկողության իրավունք ունեն: Եթե հսկողությունից հետո պետության մոտ մնում են կասկածներ պետության կողմից իր պարտականությունների կատարման հարցում, պետությունները խորհրդակցում են նման կասկածների վերաբերյալ: Եթե գոյություն ունեցող կասկածները այնուամենայնիվ չեն փարատվում, պետությունները իրավունք ունեն դիմել այլ երկրների աջակցությանը: Եթե որևէ պետության տարածք անկախ իր կամքից հայտնվել է կասկածի տեղիք տվող վայրում, ապա այդ պետությունը ևս կարող է մասնակցել բանակցություններին, այնպես, ինչպես կասկածվող պետությունը: Պետությունները, հարցը ինքնուրույն չլուծելու դեպքում, դիմում են Անվտանգության խորհրդին:

1996թ. սեպտեմբերի 24-ին կնքվեց Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման մասին պայմանագիր, որն արդեն բավականին մանրամասնում է միջուկային զինամթերքի կարգավորման ոլորտը.

1.պետությունները պարտավորվում են չիրականացնել ցանկացած փորձարարական միջուկային պայթյուն, ինչպես նաև կանխել և արգելել նման միջուկային պայթյունը ցանկացած տեղում, որը գտնվում է իր իրավական կարգավորման ոլորտում կամ իր հսկողության տակ.

2. յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հետագայում զսպել հրահրելուց, գրգռելուց կամ որևէ այլ տիպի փորձարարական միջուկային զենքի կիրառման մասնակցությունից կամ այլ միջուկային պայթյուն իրագործելուց[5]:

Պայմանագրում սահմանվում է, որ համընդհանուր կերպով միջուկային զենքի փորձարկումը արգելելու համար պետք է ստեղծվի

մի կազմակերպություն: Այս կազմակերպությունը պետք է ապահովի միջազգային հետևյալ նորմի իրականացումը՝ միջազգային հսկողությունը դրա նկատմամբ, ինչպես նաև պետությունների միջև պետք է ապահովի խորհրդակցություններ, համագործակցություններ: Կազմակերպությունը գտնվելու է Ավստրիայում (Վիեննայում): Կազմակերպությունը կունենա իր մարմինները՝ մասնակից պետություններից կազմված հանձնաժողով, գործադիր մարմին, տեխնիկական քարտուղարություն, որի մեջ մտնում է Տվյալների միջազգային կենտրոնը: Կազմակերպության միջոցները գոյանում են մասնակից պետությունների կատարած ներդրումներից[6]:

Ինչպիսի՞ իրավական կարգավորում են ապահովում մեր վերը նշած պայմանագրերը. թերևս՝ ոչ մի լուրջ քայլ, որը հարցի լուծում կլինի: Սահմանված են բազմաթիվ նորմեր, բայց չկան դրանց կիրառման միջոցները: Անհրաժեշտ է մեթոդներ մշակել և համընդհանուր կերպով պարտավորեցնել պետություններին դա կիրառելու: Պետությունները պետք է կատարեն պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունները, մասնավորապես արգելել ֆիզիկական և իրավաբանական անձանց, եթե նրանք գտնվում են իրենց իրավական կարգավորման տարածքներում կամ այն տարածքներում, որոնք գտնվում են իրենց իրավական հսկողության ներքո, փորձարկել միջուկային որևէ տեսակի զենք, ինչպես դա պահանջվում է միջազգային իրավունքի սկզբունքներով:

Բացի վերը նշած մեթոդից, կան նաև այլ եղանակներ ևս, պետությունները ազգային շրջանակներում հիմնում են միջուկային կազմակերպություն, և միջուկային հարցերով զբաղվում է հենց այս մարմինը:

Գոյություն ունի նաև մի կարևոր մեթոդ ևս՝ հսկողությունը: Միջուկային զենքի փորձարկումն իրականացնելու համար սահմանված հսկողությունը կազմված է հետևյալ տարրերից՝

1.միջազգային մոնիտորինգի համակարգ,

2. խորհրդակցություն և պարզաբանում,

3. հսկողություն տեղում,

4. վստահության ամրապնդման պայմաններ[7]:

Մենք պետք է ընդունենք այն փաստը, որ միջուկային զենքի խնդիրները արդեն կես դարից ավել միջազգային անհանգստության հենակետ են: Պետությունները շատ մեծ նշանակություն են տալիս միջուկային զենքին, քանի որ այն իր հզորությամբ գերազանցել է մինչ այդ գոյություն ունեցող զենքերին, որն էլ նպաստում է զենքի այս տեսակի արագ տարածմանը: Մեր կատարած ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ միջուկային զենքի սահմանափակումը բոլոր կողմերով արդարացված է:

Վերը թվարկված մեթոդների հիմքը 1996թ. պայմանագրում առկա է, բայց, ցավոք, այն դեռևս ուժի մեջ չի մտել: Թերևս այն 172 պետությունները, որ ստորագրել են պայմանագիրը, անկախ վավերացման բացակայության փաստից, Վիեննայի 1963թ. կոնվենցիայի համաձայն, պարտավոր են զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք արգելք կլինեն պայմանագրի նպատակների իրականացմանը: Այլ կերպ ասած՝ պետությունները պետք է չփորձարկեն միջուկային զենք: Միջազգային իրավունքով սահմանվում է, որ համընդհանուր կերպով արգելված է միջուկային զենքի փորձարկումը մթնոլորտում, ջրերում, արգելված է տարածել միջուկային զենք: Գոյություն ունեցող միջազգային նորմերն էլ ոչ բոլոր միջուկային երկրների կողմից են ճանաչվում: Պետք է մշակել այնպիսի նորմեր, որ տարածվեն բոլոր պետությունների վրա և հատկապես՝ միջուկային զենք տիրապետողների: Միջազգային նորմերով ամրագրված է, որ պետությունները իրավունք ունեն արտադրել միջուկային զենք միայն գիտատեխնիկական, քաղաքական, տնտեսական, ռազմատեխնի-

կական զարգացման նկատառումներից ելնելով: Հենց այս պաշտպանիչ դրույթն էլ կիրառում են պետությունները՝ քողարկելու տարբեր սենսակի զենքերի տիրապետումը: Այնուամենայնիվ այս հարցը վերջնականորեն լուծված չի համարվում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Международное право. Ведение боевых действий. Сборник Гаагских конвенций и иных соглашений. М., 1995г.
2. "Действующее международное право". Документы в 2-х томах. Т. 1, Т. 2. М., 2002г.
3. Гаагские конвенции и декларации 1899г. и 1907г.
4. Договор о всеобъемлющем запрещении ядерных испытаний от 24 сентября 1996 года.
5. Договор о запрещении испытаний ядерного оружия в атмосфере, в космическом пространстве и под водой от 5 августа 1963 года.
6. Договор о запрещении размещения на дне морей и океанов и в его недрах ядерного оружия и других видов оружия массового уничтожения от 11 февраля 1971 г..
7. Договор о нераспространении ядерного оружия. Женева, 1 июля 1968 года.

---

[1] Տե՛ս 1996 ICJ 226,258 8 July.

[2] Տե՛ս Договор о запрещении испытаний ядерного оружия в атмосфере, в космическом пространстве и под водой от 5 августа 1963 г. С. 1.

[3] Տե՛ս Договор о нераспространении ядерного оружия. Женева, 1 июля 1968 года. 01.07.1968 г. С. 1.

[4] Տե՛ս Договор о запрещении размещения на дне морей и океанов и в его недрах ядерного оружия и других видов оружия массового уничтожения от 11 февраля 1971 г. С. 1.

[5] Տե՛ս Договор о всеобъемлющем запрещении ядерных испытаний от 24 сентября 1996 г. С. 1.

[6] Տե՛ս Договор о всеобъемлющем запрещении ядерных испытаний от 24 сентября 1996 г. С. 2.

[7] Տե՛ս Договор о всеобъемлющем запрещении ядерных испытаний от 24 сентября 1996 г. С. 4.